ՍԵՄԻՆԱՐ-ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հուլիսի 21-23-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր Սեղան հիմնադրամի նախաձեռնությամբ տեղի ունեցավ սեմինար-խորհրդաժողով «Կանաչ աստվածաբանություն» թեմայով:

Հուլիսի 21-ին և 22-ին սեմինարի մասնակիցները՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի և Սևանի Վազգենյան Դպրանոցի սաները, Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի ուսանողներն ունկնդրեցին Օքսֆորդի համալսարանի դասախոս պրոֆ. Դիմիտրի Օյկոնոմուի դասախոսությունները բնապահպանական խնդիրների վերաբերյալ՝ ուղղափառ աստվածաբանության դիտանկյունից: Այս խնդիրների պարզաբանմանն էին նվիրված բանախոսի «Արարումը Հին Կտակարանում», «Արարումը Նոր Կտակարանում», «Ուղղափառություն և բնապահպանություն. ծես, պատկերագրություն», «Ուղղափառություն և բնապահպանություն. հայրաբանություն» թեմաներով դասախոսությունները:

Նույն խնդիրների քննարկմանն էր նվիրված հուլիսի 23-ի խորհրդաժողովը, որի աշխատանքներին միացան նաև Հայաստանում բնապահպանական խնդիրներով զբաղվող մի շարք հասարակական ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Խորհրդաժողովին բանախոսություններով հանդես եկան Հայաստանի Աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Հրաչ ավ. սրկ. Մարգսյանը, պրոֆեսոր Կարինե Դանիելյանը և Դիմիտրի Օյկոնոմուն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ